Հավելված N 3
Հայաստանի Հանրապետության տարածքային
կառավարման և զարգացման նախարարի
«08 » մայիսի 2018 թվականի թիվ 131 -Ա
հրամանի



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐ

Արմավիր |2018

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ 3

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 4

I.ԱՂՔԱՏՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՈՒՄ 5

II.ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ, ՓՄՁ ԵՎ ՄԱՍՆԱՎՈՐ ՀԱՏՎԱԾԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ 5

III. ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅՈՒՆ 6

IV.ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ 7

V. ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ 10

VI.ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՈԼՈՐՏ 11

6.1. ԿՐԹՈՒԹՅՈՒՆ 11
6.2. ՄՇԱԿՈՒՅԹ, ՍՊՈՐՏ և ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ 12
6.3. ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ 14
6.4. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ 15

VII. ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ 16

7.1. ՏՐԱՆՍՊՈՐՏ և ՃԱՆԱՊԱՐՀԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ 16
7.2. ԽՄԵԼՈՒ ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՈՒՄ և ՋՐԱՀԵՌԱՑՈՒՄ 17
7.3. ԳԱԶԱՖԻԿԱՑՈՒՄ 17
7.4. ԷՆԵՐԳԵՏԻԿԱ 18

VIII.ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ 18

IX. ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ, ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՈՒՄ, ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ, ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻՑ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԵՎ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ 19

9.2. ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՈՒՄ 19
9.3. ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ 20
9.4. ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻՑ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ և ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ 20

X. ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ 21

XI. ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ 2018Թ. ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄԸ 21

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ 22

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ՀԶՌ	Հայաստանի զարգացման ռազմավարություն
ՀՏԶՌ	Հայաստանի տարածքային զարգացման ռազմավարություն
ՀՏԶՀ	Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ
ՀԱԷԿ	Հայկական ատոմային էլեկտրակայան
ՎԶԵԲ	Վերակառուցման և Զարգացման Եվրոպական Բանկ
ԵՄ	Եվրոպական Միություն
ՀՆԱ	Համախառն ներքին արդյունք
ՀԱԱ	Համախառն ավելացված արժեք
ՏԿԶՆ	Տարածքային կառավարման և զարգացման նախարարություն
ՏԻՄ	Տեղական ինքնակառավարման մարմին
ԶԼՄ	Զանգվածային լրատվության միջոցներ
ԱՎԾ	Ազգային վիճակագրական ծառայություն
ՍՊԸ	Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն
ՏԻՄ	Տեղական ինքնակառավարման մարմիններ
ՏԶ	Տարածքային զարգացում
ՏԶՀՊ	Տնտեսական զարգացման հարցերով պատասխանատու
ԳՖԿ	Գյուղական ֆինանսավորում կառույց
ՀԳՏՏԶՀ	Հայաստանում գյուղական տարածքների տնտեսական զարգացման հիմնադրամ
ՄԱԶԾ	ՄԱԿ-ի զարգացման ծրագիր
ԳԷՀ	Գլոբալ էկոլոգիական հիմնադրամ
ՀԷՑ	Հայաստանի էլեկտրական ցանցեր

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի հուլիսի 6-ի նիստի N 29 արձանագրային որոշման N 3 հավելվածով հավանության է արժանացել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի 2017-2025 թվականների զարգացման ռազմավարությունը:

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի զարգացման տեսլականն է՝ **ունենալ կայուն, համաչափ զարգացող, մրցունակ տնտեսություն, զբաղվածության բարձր մակարդակ և ծայրահեղ աղքատությունն ամբողջությամբ հաղթահարած մարզ**:

Տեսլականին հասնելու նպատակով ՀՀ Արմավիրի մարզի առկա իրավիճակի վերլուծության հիման վրա սահմանել են հետևյալ ռազմավարական նպատակները.

1) Մինչև 2025թ. ՀՀ Արմավիրի մարզի տնտեսական աճի ապահովում՝ տնտեսության վարման ինտենսիվ մեթոդների կիրառման, աշխատատեղերի ստեղծման, աղքատության կրճատման միջոցով՝ մինչև 10%,
2) Մինչև 2025թ. ՀՀ Արմավիրի մարզի թույլ զարգացած տարածքների անհամաչափությունների նվազեցում՝ 10%-ով,
3) Մարզային զարգացման ռազմավարության իրականացման ընթացքում մարզային և տեղական դերակատարների ակտիվության բարձրացում և մարդկային կապիտալի կառավարման հմտությունների բարելավում:

Սահմանվել են զարգացման երեք առաջնահերթ գերակայությունները.

1) Արդյունաբերության աճ՝ շեշտը դնելով փոքր ու միջին բիզնեսի զարգացման վրա, մասնավորապես վերամշակող արդյունաբերական կազմակերպությունների հիմնում/ ընդլայնում,
2) Ինտենսիվ գյուղատնտեսության զարգացում՝ հատկապես Բաղրամյանի տարածաշրջանում,
3) Տուրիզմի զարգացում՝ շեշտը դնելով հոգևոր, մշակութային, գյուղական և ագրո տուրիզմի վրա:

Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի նոյեմբերի 9-ի նիստի N 47 արձանագրային որոշմամբ հավանության է արժանացել Հայաստանի Հանրապետության 2018-2020 թվականների տարածքային զարգացման գործառնական ծրագիրը:

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի 2018 թվականի գործունեության ծրագիրը մշակվել է՝ առաջնորդվելով «Մարզային զարգացման ծրագրերի մշակում և իրականացում» 2008-2009թթ. մեթոդական ձեռնարկով: Ծրագրում ներառվել են ՀՀ կառավարության 2017 թվականի դեկտեմբերի 7-ին կայացած նիստի N 29.7/[431977]-17 N 51 արձանագրությամբ տրված հանձնարարականի ցուցանիշներն ու ուղղությունները:

Ծրագրի նպատակներն են.

1) համախմբել 2018 թվականի ընթացքում մարզում նախատեսվող բոլոր միջոցառումները՝ մարզի ռազմավարական նպատակների իրականացման համար,
2) ներառել միջոցառումների իրականացման ցուցանիշները և արդյունքները տրամաբանական հենքում
3) սահմանել այն կազմակերպությունները, որոնք պատասխանատու են կոնկրետ միջոցառումների իրականացման համար:

2018 թվականի գործունեության ծրագրում ներկայացվում են այն միջոցառումները, որոնց իրականացման ընթացքին հետևելու է ՀՀ Արմավիրի մարզպետարանը: Ծրագրում ներառված են Հայաստանի Հանրապետության 2018 թվականի պետական բյուջեի, համայնքային բյուջեի, մասնավոր ներդրումներով, ինչպես նաև միջազգային և այլ կազմակերպությունների կողմից Արմավիրի մարզում 2018 թվականին նախատեսվող ներդրումային ծրագրերը: Արձանագրվել են այն հիմքերը, որոնց վրա կառուցվելու են մշտադիտարկման աշխատանքները:

Ի.ԱՂՔԱՏՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՈՒՄ

ՀՀ Արմավիրի մարզի 2017-2025թթ. զարգացման ռազմավարությունում բավարար կերպով տրված է աղքատության գնահատումը մարզում: Բացահայտվել են մարզում աղքատությունը պայմանավորող հիմնական գործոնները, մարզի սոցիալ-տնտեսական զարգացման խոչընդոտները և դրանց հիման վրա նախանշվել աղքատության հաղթահարման ռազմավարությունն ու համապատասխան միջոցառումները:

Համաձայն մարզի զարգացման տեսլականի՝ խնդիր է դրվել ունենալ կայուն, համաչափ զարգացող, մրցունակ տնտեսություն, զբաղվածության բարձր մակարդակ ունեցող, ինչպես նաև ծայրահեղ աղքատությունն ամբողջությամբ հաղթահարած մարզ:

Աղքատության մակարդակը մարզում կազմել է 2015 թվականին 29.6%, ծայրահեղ աղքատության մակարդակը՝ 2.1%, 2016 թվականին 30%, ծայրահեղ աղքատության մակարդակը՝ 1.5%: Ակնկալվում է, որ 2018 թվականին մարզի աղքատության մակարդակը կնվազի 0.8 տոկոսային կետով, ծայրահեղ աղքատության մակարդակը՝ 0.2 տոկոսային կետով:

ԻԻ.ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ, ՓՄՁ ԵՎ ՄԱՍՆԱՎՈՐ ՀԱՏՎԱԾԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ

Արդյունաբերության, ՓՄՁ և մասնավոր հատվածի զարգացումը մարզում աղքատության կրճատման և տնտեսական զարգացման ամենակարևոր ուղղություններից է:

Մարզի արդյունաբերությունը մասնագիտացած է էլեկտրաէներգիայի, սննդամթերքի, ըմպելիքի, ալկոհոլային խմիչքի արտադրության և օգտակար հանածոների հանքավայրերի շահագործման ուղղությամբ: Արդյունաբերական ձեռնարկությունները հիմնականում կենտրոնացած են քաղաքային համայնքներում: Մարզում առկա են նաև նախկին արդյունաբերական չօգտագործվող տարածքներ՝ հատկապես քաղաքային համայնքներում և Բաղրամյանի տարածաշրջանի համայնքներում, և մարզի ազգաբնակչության մասնագիտական կարողությունների մեջ դեռևս առկա է արդյունաբերական աշխատողների ներուժ, մարզում գերակա խնդիր է զարգացնել նաև արդյունաբերությունը:

2018 թվականին խնդիր է դրվում բարձրացնել գործարար ակտիվությունը մարզում՝ բիզնես պլանավորման և կառավարման տարածաշրջանային հատուկ մոտեցումների կիրառման միջոցով՝ ներգրավելով այդ գործընթացներում ՏԻՄ-երին և համայնքների գործարար ներկայացուցիչներին:

ՀՀ կառավարության 2017թ. դեկտեմբերի 21-ի նիստի N 53-29 արձանագրային որոշմամբ հավանության է արժանացել համայնքային տնտեսության աճի վրա էական ազդեցություն ունեցող ներդրումային և գործարար ծրագրերի գնահատման ընթացակարգը, որով կկարգավորվեն համայնքային տնտեսության աճի վրա էական ազդեցություն ունեցող գործարար ծրագրերի գնահատման և այդ ծրագրերի պետական աջակցության տրամադրման հետ կապված հարաբերությունները: Ծրագրերի գնահատումը բաղկացած է երեք առանձնացված գործառույթներից.

1) Ծրագրերի նախաստուգում և դրանց հետագա ուղղորդում, որն իրականացվում է «Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ» Հիմնադրամի մարզային կառույցների կողմից:
2) Ծրագրերի խորքային գնահատում, ինչպես նաև, դրա հիման վրա՝ ֆինանսավորման տրամադրման դրական կամ բացասական եզրակացության ներկայացում, կարող է իրականացվել ֆինանսական կազմակերպության կողմից («ՓՄՁ Ներդրումներ ՈՒՎԿ» ՓԲԸ, «Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ» հիմնադրամ, բանկեր և այլ ֆինանսական կազմակերպություններ):

3) Ֆինանսական կազմակերպության կողմից դրական եզրակացություն ստացած ծրագրերի գնահատում՝ դրանց վարկային տոկոսադրույքների սուբսիդավորման նպատակահարմարության որոշման նպատակով, իրականացվում է միջգերատեսչական հանձնաժողովի կողմից:

2018թ. մարզում փոքր և միջին ձեռնարկատիրության, ինչպես նաև մասնավոր հատվածի զարգացման ուղղությամբ ՓՄՁ ԶԱԿ-ի կողմից նախատեսվում են իրականացնել մի շարք ծրագրեր, այդ թվում՝

1) ՓՄՁ-ի սուբյեկտներին գործարար ուսուցողական աջակցություն (կարողությունների զարգացում)
2) ՓՄՁ-ի սուբյեկտներին գործարար տեղեկատվական և խորհրդատվական աջակցություն
3) ՓՄՁ-ի սուբյեկտներին ֆինանսական և ներդրումային աջակցություն
4) ՓՄՁ-ի սուբյեկտների միջազգային համագործակցության ընդլայնման ապահովում
5) ԵՄ համաֆինանսավորմամբ «Տարածաշրջանային ՓՄՁ-ների մրցունակության խթանում» ծրագրի շարունակություն:

2018թ. մարզում ՓՄՁ ԶԱԿ-ի կողմից նախատեսվում է իրականացնել ընդհանուր առմամբ 95.0մլն դրամի ծրագրեր (50.0մլն դրամ՝ միջոցառումներ և 45.0 մլն դրամ 10 ՓՄՁ սուբյեկտի վարկային երաշխավորությունների տրամադրում):

2018թ. մասնավոր ներդրումներով պլանավորվել է իրականացնել 30.12 մլրդ դրամի ծրագրեր, այդ թվում՝ ՓՄՁ ոլորտում կատարվող ծրագրեր, Արմավիր քաղաքում աղբի վերամշակման գործարանի կառուցում, Գայ համայնքում գյուղմթերքների վերամշակման գործարանի կառուցում և Կոնվերս բանկի Արմավիրի մասնաճյուղի նոր տարածքի վերանորոգում և վերազինում:

2018թ. ոլորտի բյուջեն կազմում է 30,215.0 մլն դրամ, որից 30,120.0 մլն դրամը՝ կապիտալ ծրագրեր, պլանավորվում է ստեղծել 632 աշխատատեղեր:

III. ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Արմավիրի մարզում կան բոլոր հնարավորությունները հոգևոր-մշակութային, էթնիկ, գյուղական, ագրո և էկո տուրիզմի զարգացման համար՝ զբոսաշրջությունը դարձնելով մարզի տնտեսության զարգացման հիմնական շարժիչ ուժերից մեկը: ՀՀ Արմավիրի մարզում արդեն իսկ կան առանձին կազմակերպություններ, որոնք զբաղվում են հոգևոր-մշակութային և էթնիկ տուրիզմով և որոնց հաջողված փորձի տարածումը մարզի այլ համայնքներում կարող է նպաստել մարզում զբոսաշրջության ոլորտի զարգացմանը:

«Ուխտագնացություն դեպի առաջին քրիստոնյա երկիր» զբոսաշրջային ռազմավարության մշակումն արդեն իսկ ստեղծում է որոշակի նախադրյալներ ազգային և մարզային մակարդակների ծրագրերի համադրմամբ ոչ միայն Էջմիածինը դարձնել տուրիզմի զարգացման կենտրոն, այլ նաև այստեղ ստեղծված հնարավորություններն օգտագործել Էջմիածնի շուրջ գտնվող պատմամշակութային կոթողներ և հուշարձաններ ունեցող համայնքներում ևս իրականացնելու մշակութային, էթնիկ, գյուղական և ագրո տուրիզմի խթանմանն ուղղված ծրագրեր:

Ոլորտի թույլ կողմերից է՝ տուրիստական ենթակառուցվածքների բացակայությունը, այդ թվում՝ հյուրատների, հյուրանոցների, բարձրորակ սպասարկման ծառայությունների բացակայությունը:

Մարզի ռազմավարությամբ առաջնահերթ գերակայություն է սահմանվել տուրիզմի զարգացումը՝ շեշտը դնելով հոգևոր, մշակութային, գյուղական և ագրո տուրիզմի վրա:

Հանրապետության զբոսաշրջության զարգացման ռազմավարությամբ ներկայացված ուղղություններով 50-60% ընդգրկմամբ հնարավոր է աշխատանքներ իրականացնել Արմավիրի մարզում:

Մարզը համագործակցում է ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության զբոսաշրջության պետական կոմիտեի, ՄԱԿ-ի «Ինտեգրված գյուղական զբոսաշրջության զարգացում» ծրագրի, ԵՄ ծրագրի, ինչպես նաև տեղական կազմակերպությունների հետ:

Զբոսաշրջության պետական կոմիտեի և Հայաստանի զբոսաշրջության զարգացման հիմնադրամի մշակած «20 անիրական իրականություն»՝ 20 պատմամշակութային և բնության հատուկ պահպանվող տարածքները զբոսաշրջային վայր դարձնելու համալիր ծրագրի «Քաղաքակրթություն» երթուղում ընդգրկված է մարզի Զվարթնոցի տաճարը և Մեծամորի հնագիտական թանգարանը:

ՄԱԿ-ի «Ինտեգրված գյուղական զբոսաշրջության զարգացում» ծրագրով մարզում պլանավորվում է իրականացնել գյուղական տուրիզմի զարգացման ծրագրեր՝ ներգրավելով առնվազն 10 գյուղական ընտանիքներ՝ 40 շահառուներով: Արմավիրի մարզը հինգ մարզերից մեկն է, որտեղ կիրականացվի «Տնական գինու արահետ» ծրագիրը՝ ՄԱԿ-ի, GIZ-ի, ՔԱՐԴ-ի ֆինանսավորմամբ: Քննարկման փուլում են մի շարք ծրագրային գաղափարներ, մասնավորապես՝ «Արմավիրի ոսկե զամբյուղ» (մարզի տարբեր պտղատու ինտենսիվ այգիներ տանող արահետի ուրվագծում, այցելությունների կազմակերպում՝ ծառերի ծաղկման, աճի և բերքահավաքի ժամանակ), Մրգաշատ համայնքում «Մաճառի տոն»-ի լուսաբանում և վերածում համահայկական փառատոնի, «Ընտանիքի հանգիստ Արաքս գետի ափին», Արգիշտիխինիլի հնավայրը զբոսաշրջային կենտրոն, «Արարատն այն կողմից» մշակութային ավանդական փառատոն, «Սարդարապատի բեմական ներկայացումներ՝ անիմացիոն լուծումներով», Արգավանդ համայնքում ընտանեկան հանգիստ, ինչպես նաև հյուրընկալությունների համար մարզում գյուղական ընտանիքների ընտրություն (նաև Սարդարապատի 100-ամյակին նվիրված միջոցառումների ժամանակ), տեղացի գիդ-ուղեկցորդների թիմի ձևավորում և այլ ծրագրեր:

ԵՄ համաֆինանսավորմամբ իրականացվող «Տարածաշրջանային ՓՄՁ-ների մրցունակության խթանումը» ծրագրի շրջանակներում «Հաջող սկիզբ ծրագրով» ներկայացվել և հաստատվել է զբոսաշրջային կենտրոնի հիմնման ծրագիրը, որը կյանքի կկոչվի 2018թ. ընթացքում:

2018թ. պլանավորվում է մշակել զբոսաշրջության խթանմանն ու զարգացմանն ուղղված առնվազն 20 ներդրումային ծրագրեր և ներկայացնել ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության զբոսաշրջության պետական կոմիտե՝ միջազգային կազմակերպություններին և արտերկրի ներդրողներին ներկայացնելու նպատակով:

2018թ. մասնավոր ներդրումներով պլանավորվել է իրականացնել 130 մլն դրամի ծրագրեր, այդ թվում՝ հանգստի գոտու, հյուրանոցառեստորանային համալիրի և հանդիսությունների սրահի կառուցում:

2018թ. զբոսաշրջության ոլորտի բյուջեն կազմում է 180.0 մլն դրամ՝ կապիտալ ծրագրեր, պլանավորվում է ստեղծել 28 աշխատատեղեր:

IV.ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Գյուղատնտեսության ոլորտի գերակայություններ են սահմանվել գյուղատնտեսության տեխնիկական վերազինումը/արդիականացումը, նորարարությունների, տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրումը և խթանումը, իսկ առաջնահերթ գերակայություն է սահմանվել՝ ինտենսիվ գյուղատնտեսության զարգացումը՝ հատկապես Բաղրամյանի տարածաշրջանում:

Ոլորտի թույլ կողմերն են՝ ավանդական գյուղատնտեսության դոմինանտ լինելը, գյուղատնտեսական նշանակության հողերի մասնատվածությունը, մեքենայացման, արտադրողականության ցածր մակարդակը, ոռոգման համակարգերի մաշվածության հետևանքով ոռոգման ջրի կորուստները, գյուղատնտեսական մթերքների վերամշակման կազմակերպությունների

ոչ բավարար հզորությունը, մթերման ծավալների ցածր մակարդակը, գյուղատնտեսության մեջ զբաղվածությունը՝ միայն ընթացիկ կարիքները հոգալու նպատակով:

ՀՀ Արմավիրի մարզի համար խնդրահարույց տարածքներ են համարվում 29 համայնքների 2986հա աղուտ-ալկալի հողերը և գերնորմատիվային ջրի պահանջարկ ունեցող 25 համայնքները:

2018թ. նախատեսվում է ավելացնել գյուղատնտեսական նշանակության հողերի ոռոգելի մակերեսը 20հա-ով՝ 2017 թվականի համեմատ:

2017թ. տարեվերջին մարզի 49 համայնքներում 3208 սուբյեկտների (7 իրավաբանական անձ, 3201 ֆիզիկական անձ) կողմից մշակվում են ընդամենը 855.5հա կաթիլային եղանակով ոռոգելի տարածքներ (ջերմոցներ, խաղողի, պտղատու այգիներ, բանջար-բոստանային ցանքատարածություններ):

2018թ. մարզում կաթիլային ոռոգման համակարգերի ներդրման համար տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագրի շրջանակներում նախատեսվում է 350հա տարածքի վրա ներդնել համակարգեր, վարկի սուբսիդավորման համար կանխատեսվող գումարի չափը կազմում է 25.0 մլն դրամ:

2018թ. ՀՀ-ում ժամանակակից տեխնոլոգիաներով մշակվող ինտենսիվ պտղատու այգիների հիմնման համար վարկային տոկոսադրույքների սուբսիդավորում պիլոտային ծրագրի շրջանակներում նախատեսվում է մարզում հիմնել 410հա ինտենսիվ այգիներ:

2017թ. մարզի 7 համայնքում, 7 սուբյեկտների (1 իրավաբանական անձ, 6 ֆիզիկական անձ) 77.9հա տարածքներ ցանցապատված է, որից 76.39 հա խաղող, 1հա պտուղ:

2018թ. ՀՀ գյուղատնտեսության ոլորտում հակակարկտային ցանցերի ներդրման համար տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագրի շրջանակներում նախատեսվում է մարզում հակակարկտային ցանցեր տեղակայել 5.5հա այգիների վրա:

2017թ. գյուղատնտեսական տեխնիկայի ֆինանսական վարձակալության՝ լիզինգի պետական աջակցության ծրագրի շրջանակներում մարզի 10 համայնքների 10 սուբյեկտների (1 իրավաբանական անձ, 9 ֆիզիկական անձ) տրամադրվել է 15 տրակտոր և 2 գյուղ. գործիք:

2018թ. ՀՀ գյուղատնտեսական տեխնիկայի ֆինանսական վարձակալության՝ լիզինգի պետական աջակցության ծրագրի շրջանակներում նախատեսվում է մարզի շուրջ 10 շահառուների տրամադրել 10 գյուղտեխնիկա, լիզինգի տոկոսադրույքի սուբսիդիայի կանխատեսվող գումարի չափը՝ 37 մլն դրամ:

Արմավիրի մարզում սպանդանոցներ, տոհմաբուծարաններ չկան:

2018թ. սպանդանոցային կարողությունների զարգացման ծրագրի շրջանակներում նախատեսվում է մարզում հիմնել 1 սպանդանոց:

Արմավիրի մարզում առկա են 205 սառնարանային տնտեսություններ՝ 14654 տոննա ընդհանուր տարողությամբ: 2018 թվականին նախատեսվում է մարզի համայնքներում սառնարանային տնտեսությունների թիվը ավելացնել 50-ով՝ շուրջ 500 տոննա ընդհանուր տարողությամբ:

2017թ. առաջարկություն է ներկայացվել մարզում 30 նոր խորքային հորերի հորատման և 14 խորքային հորերի վերականգնման վերաբերյալ 16 համայնքներում, որի իրականացման դեպքում 1001հա ջրապահովվածությունը կբարձրանա և 1039հա հողատարածքներ կօգտագործվեն գյուղատնտեսական արտադրության մեջ, որոնք նախկինում անմշակ էին: Ներկայացվել է նաև մարզում ջրամբարաշինության վերաբերյալ առաջարկություն:

2018թ. մարզում ՀՀ պետական բյուջեի միջոցներով կիրականացվեն նաև մի շարք այլ ծրագրեր, մասնավորապես՝ բույսերի պաշտպանության միջոցառումներ (3.87մլն դրամ), պետական աջակցություն հողօգտագործողներին մատչելի գներով պարարտանյութերի ձեռքբերման համար (40.3մլն դրամ), հողերի ագրոքիմիկական հետազոտության և բերրիության բարձրացման միջոցառումներ (3.66մլն դրամ), հացահատիկային և հատիկընդեղեն մշակաբույսերի տեղական սերմնաբուծության ու սերմնարտադրության զարգացում (26.5մլն դրամ), գյուղատնտեսության

ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագիր (406.17մլն դրամ, շուրջ 420 շահառու), գյուղատնտեսական կենդանիների պատվաստում (116.5 մլն դրամ), գյուղատնտեսական հումքի մթերումների (գնումների) նպատակով ագրովերամշակման ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքերի սուբսիդավորման ծրագիր (380.4 մլն դրամ), ինչպես նաև գյուղատնտեսական խորհրդատվական ծառայություններ:

2018թ. ՀՀ պետական բյուջեով հատկացվել է շուրջ 3279.7 հազ. դրամ՝ Ապագա համայնքի պոմպակայանի կառուցման, մարզում 7 խորքային պոմպերի ձեռքբերման ու տեղադրման, Մուսալեռ համայնքում 1 խորքային հորի վերականգնման և մարզում 3 պոմպակայանների վերանորոգման նպատակով (Ջրային տնտեսության պետական կոմիտե, «Արմավիր» և «Շենիկ» ՋՕԸ-եր):

ՀՀ կառավարության աշխատակազմի «Գյուղական տարածքների տնտեսական զարգացման ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՀ-ի կողմից մարզում կիրականացվեն ծրագրեր՝ «Ենթակառուցվածքների և գյուղական ֆինանսավորման աջակցություն» ծրագրի Գյուղական ֆինանսավորում բաղադրիչով: Բաղադրիչն իրականացվում է Գյուղական ֆինանսավորում կառույցի (ԳՖԿ) միջոցով, որը մասնակից ֆինանսական կառույցների միջոցով ֆինանսավորում է տրամադրում գյուղատնտեսության ոլորտին, ինչպես նաև Հայաստանում գյուղական տարածքների տնտեսական զարգացման հիմնադրամի միջոցով (ՀԳՏՏՋՀ-ՖՐԵԴԱ), որը գյուղատնտեսության ոլորտի ձեռնարկություններին տրամադրում է ստորադաս փոխառություններ և կատարում բաժնեմասային ներդրումներ:

2018թ. ընթացքում պլանավորվում է աջակցություն ցուցաբերել համայնքապետարաններին և մասնավոր հատվածին մի շարք ներդրումային ծրագրերի կազմման և ներդրողներին ներկայացման գործընթացում, որի արդյունքում կստեղծվեն նոր աշխատատեղեր:

2018թ. Համաշխարհային բանկի ֆինանսավորմամբ, «Ջրային տնտեսության ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՀ-ի կողմից «Ոռոգման համակարգերի բարելավման ծրագրով (ՈՀԲԾ)» կիրականացվեն Բաղրամյան-Նորակերտ ինքնահոս համակարգի մինչև 1կմ մայր խողովակաշարի և 149կմ ներտնտեսային ցանցի բարելավման ծրագրերը՝ 660.0 մլն դրամ արժողությամբ, շահառուների թիվը կկազմի շուրջ 440 ջրօգտագործող:

2018թ. Եվրասիական զարգացման բանկի ֆինանսավորմամբ, «Ջրային տնտեսության ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՀ-ի կողմից «Ոռոգման համակարգերի արդիականացման ծրագրով (ՈՀԱԾ)» մարզում կիրականացվեն Ստորին Հրազդան մայր ջրանցքի (3500մ) վթարային, երկրորդ կարգի ջրանցքների (23900մ) վթարային և երրորդ կարգի ջրանցքների (82715մ) քայքայված հատվածների վերականգնման նախագծային աշխատանքները՝ շուրջ 145.4 մլն դրամ, ինչպես նաև Ստորին Հրազդան մայր ջրանցքի (3500մ) և երկրորդ կարգի ջրանցքների (23900մ) վթարային հատվածների շինարարական աշխատանքները՝ 616.0 մլն դրամ արժեքով:

2018թ. Համաշխարհային բանկի ֆինանսավորմամբ, «Ջրային տնտեսության ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՀ-ի կողմից կիրականացվի Մաստարայի ջրամբարի նախապատրաստման դրամաշնորհային ծրագիրը՝ 170.0 մլն դրամ արժեքով, որի շրջանակում նախատեսվում է իրականացնել տեխնիկատնտեսական ուսումնասիրություն, նախնական նախագիծ, շրջակա միջավայրի վրա և սոցիալական ազդեցության գնահատում, վերաբնակեցման գործողությունների պլան:

2018թ. նախատեսվում է մասնավոր ներդրումներով իրականացնել 2303.2 մլն դրամի (ինտենսիվ այգիներ, կաթիլային ոռոգման համակարգեր, հակակարկտային ցանցեր, անասնապահական ֆերմաներ), համայնքային բյուջեի միջոցներով՝ 50 մլն դրամի և այլ աղբյուրներով՝ 120 մլն դրամի (սպանդանոցի կառուցում) ծրագրեր:

2018թ. գյուղատնտեսության ոլորտի բյուջեն կազմում է 5,414.9 մլն դրամ, որից 2303.2 մլն դրամը՝ կապիտալ ծրագրեր, պլանավորվում է ստեղծել 790 հիմնական և 3000 սեզոնային աշխատատեղեր:

V. ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Արմավիրի մարզի բնապահպանական հիմնախնդիրներն են՝ ջրային պաշարների ոչ բավարար քանակությունը, անտառների բացակայությունը, մարզում աղբի կառավարման համակարգերի սահմանափակությունը, բնակչության իրազեկվածության ցածր մակարդակը բնապահպանական խնդիրների հետ կապված, ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի մաշվածությունը, կոյուղու կեղտաջրերի մաքրման կայանի բացակայությունը, կոշտ կենցաղային թափոնների կառավարման անբավարար մակարդակը, աղակալված հողերի առկայությունը, իսկ որպես սպառնալիքներ՝ ՀԱԷԿ-ի առկայությունը մարզում, մարդատար և բեռնատար տրանսպորտի բարձր խտությունը, ստորերկրյա ջրային պաշարների նվազման միտումը, կլիմայի փոփոխությունները՝ շոգ ամառների և խստաշունչ ձմեռների տևողության ավելացումը, տեղումների քանակի նվազումը, երաշտների առաջացման հնարավորությունների մեծացումը:

«Մաքուր Հայաստան» ծրագրի շրջանակներում 2017թ. կազմվել է Արմավիրի մարզի սանիտարական մաքրման սխեման: 2017թ. մարզում փակվել է 125 աղբավայր: Շահագործվող աղբավայրերի թիվը 171-ից հասցվել է 41-ի: Աղբահանություն կատարելու համար ֆիզիկական և իրավաբանական անձանց հետ կնքված պայմանագրերի թիվը 560-ից դարձել է 4387:

2018թ. ընթացքում կատարվող աշխատանքների արդյունքում նախատեսվում է փակել 5 աղբավայր, շահագործվող աղբավայրերի թիվը հասցնել 45-ի:

2018թ. մարզում ֆիզիկական անձանցից հավաքագրվող աղբահանության (սանիտարական մաքրման) վճարները պլանավորվել է 356.14 մլն դրամ, իրավաբանական անձանցից՝ 56.09 մլն դրամ, ընդամենը պլանավորված հավաքագրվող աղբահանության և սանիտարական մաքրման վճարները կազմում են 412.23 մլն դրամ:

2018թ. մարզում աղբահանության ընդհանուր ծախսը պլանավորվել է 412.0 մլն ՀՀ դրամ:

ՀՀ Արմավիրի մարզպետի 21.03.2018թ. N 01/03.2/1088-18 գրությամբ մարզի համայնքների ղեկավարներին առաջարկվել է աղբահանության ծրագրով ապահովել աշխատանքների ծախսափակ եղանակով կատարումը՝ 412.0 մլն դրամ ծախսի դիմաց ապահովելով 412.0 մլն դրամ հավաքագրում:

Մարզի Արմավիր քաղաքի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի բարելավման և Մեծամոր քաղաքի կոյուղու մաքրման կայանի կառուցման ծրագրերն ընդգրկված են Գերմանիայի զարգացման վարկերի բանկի կողմից ֆինանսավորվող 2018թ. ծրագրերի ցանկում:

2017թ. մարզում կոնսերվացվել է 1 խորքային հոր: 2018թ. Արարատյան դաշտի 50 ձկնաբուծական տնտեսություններում ավտոմատ կառավարման համակարգերի տեղադրման ծրագրի շրջանակներում նախատեսվում է համակարգեր տեղադրել նաև մարզի ձկնաբուծական տնտեսություններում:

«Քաղաքային կանաչ լուսավորություն» ՄԱԶԾ-ԳԷՀ ծրագրի ավարտական տարում՝ 2018թ. նախատեսվում է մարզում ևս շարունակել արդեն իսկ սկսված ցուցադրական նախագծերը, իրականացնել ավարտված նախագծերի մոնիթորինգ և աջակցել համայնքապետարաններին նախագծերի ընդլայնման աշխատանքների պլանավորման գործում: Համայնքապետարանների աշխատակիցների համար նախատեսվում է կազմակերպել թեմատիկ աշխատաժողով «Լուսավորության բնագավառում էներգաարդյունավետության մասշտաբավորում» թեմայով, աջակցել լուսատուների և լամպերի լաբորատոր փորձարկմանը, տրամադրել թեմատիկ հրապարակումները:

2018թ. պետական բյուջեով «Ռադիոակտիվ թափոնների վնասազերծում» ՓԲԸ-ին հատկացվել է 34.9 մլն դրամ՝ ռադիոակտիվ թափոնների կենտրոնացված փոխադրման, ուսումնասիրման, պահպանման, վնասազերծման և թաղման նպատակով:

2018թ. նախատեսվում է համայնքային բյուջեի միջոցներով իրականացնել շուրջ 220 մլն դրամի ոլորտային ծրագրեր:

2018թ. բնապահպանության ոլորտի բյուջեն կազմում է շուրջ 254.9 մլն դրամ:

VI.ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՈԼՈՐՏ

6.1. Կրթություն

ՀՀ Արմավիրի մարզի կրթական համակարգն ընդգրկում է նախադպրոցական, հանրակրթական (տարրական, հիմնական և ավագ), միջին մասնագիտական (նախնական արհեստագործական և միջին մասնագիտական) և բուհական համակարգերը: Մարզի բնակչությունը օգտվում է Երևան քաղաքի մոտ լինելու հանգամանքից և օգտագործում մայրաքաղաքի կրթական համակարգը միջին մասնագիտական և բարձրագույն կրթություն ստանալու համար:

Ոլորտի գերակա խնդիրներն են՝ համընդհանուր հավասարապես հասանելի, ներառական և որակյալ կրթության ապահովումը, որը հնարավորություն է ընձեռում անձին՝ ուսումը շարունակելու կրթության հաջորդ մակարդակում կամ անցնելու համապատասխան աշխատանքային գործունեության, 3-5 տարեկան բոլոր երեխաների համար հավասար հասանելի և որակյալ նախադպրոցական կրթության մատչելիության, ինչպես նաև 5 տարեկանների առավել ընդգրկվածության ապահովումը, ինչպես նաև մարզի շուկայի կարիքները բավարարող նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական, բարձրագույն մասնագիտական կրթությամբ մասնագետների պատրաստումը:

Կրթական հաստատությունների կառավարման արդյունավետության և կրթության որակի բարձրացմանն ուղղված ծրագրերի իրականացման ուղղությամբ նախատեսվում է շարունակել հանրակրթական համակարգի օպտիմալացումը, քայլեր ձեռնարկել ՀՀ կրթության և գիտության նախարարության հետ ավագ դպրոցների օպտիմալացման գործընթացը 2018թ. ավարտելու նպատակով, գյուղական դպրոցների ազատված տարածքներն օգտագործել համայնքների համար կարևոր նշանակություն ունեցող, ինչպես նաև դպրոցական արտադպրոցական կրթությանն ուղղված ծրագրերի իրականացման նպատակով: Միջին մասնագիտական կրթության համակարգում ՀՀ կրթության և գիտության նախարարության հետ շարունակել բացառապես մարզի կարիքները բավարարող մասնագետների պատրաստման պատվերների ձևավորման աշխատանքները:

Այն համայնքներում, որոնք չունեն նախադպրոցական կրթությունը կազմակերպելու հնարավորություններ, կրթության որակ և համապատասխանություն ծրագրի շրջանակներում շարունակել նախադպրոցական միկրոծրագրերի իրականացումը ևս 10 դպրոցում: Շարունակել ներառական կրթության իրականացումը մարզի հատուկ կրթության կարիք ունեցող բոլոր աշակերտների համար:

Միջազգային և դոնոր կազմակերպությունների հետ նախատեսվում է քննարկել մարզում տեղեկատվական տեխնոլոգիաների կենտրոնի ստեղծման հնարավորությունների խնդիրը, որը կլուծի 12-18 տարեկան երիտասարդների SS ոլորտի գիտելիքների հաղորդումը:

2018 թվականին հանրակրթության ոլորտում նախատեսվող ծրագրերն են՝

- «Տարվա լավագույն ուսուցիչ», «Տարվա լավագույն տնօրեն» և «Տարվա լավագույն դաստիարակ» մրցույթների մարզային փուլի կազմակերպում,

- ՀՀ Արմավիրի մարզում 2 տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնների հիմնադրում (Արմավիրի մտավոր թերզարգացում ունեցող երեխաների N1 հատուկ (օժանդակ) դպրոցի և Վաղարշապատի մտավոր թերզարգացում ունեցող երեխաների N2 հատուկ (օժանդակ) դպրոցի վերակազմակերպման միջոցով,
- Արմավիրի մարզի հանրակրթական դպրոցների և նոր ձևավորված 2 տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնների մանկավարժական աշխատողների վերապատրաստում՝ ՀՀ կրթության և գիտության նախարարության կրթության ազգային ինստիտուտի և դրա մասնաճյուղի ու Հանրապետական մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնի ռեսուրսների միջոցով,
- Արմավիրի մարզի 2 տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոններից սովորողների տեղափոխում հանրակրթական դպրոց,
- Արմավիրի մարզի հանրակրթական դպրոցներում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների համար սահմանված ֆինանսավորման բարձրացված չափաքանակի սանդղակի կիրառում՝ ըստ երեխայի կարիքի ծանրության աստիճանի, մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների և ուսուցչի օգնականի հաստիքի ներդրում,
- ՀՀ Արմավիրի մարզում համընդհանուր ներառական կրթության համակարգի ներդրում:

2018թ. մի շարք միջոցառումներ են նախատեսվում իրականացնել մարզառազմական և արտաուսումնական դաստիարակության ոլորտում:

Նախատեսվում է շարունակել դպրոցների վերանորոգման ծրագրերի իրականացումը, 2018թ. պետական բյուջեով հատկացվել է 327.0 մլն դրամ[1] Մուսալեռի Ֆ.Վերֆելի անվան դպրոցի վերակառուցման, Թաիրովի միջնակարգ դպրոցի հիմնանորոգման նպատակով:

2018թ. պետական բյուջեով հատկացվել է 7,023.7 մլն. դրամ՝ հանրակրթական ուսուցում, հատուկ կրթություն, ներառական կրթություն և ներառական կրթություն ծրագրերի համար:

2018թ. պետական բյուջեով հատկացվել է նաև 66.5 մլն դրամ՝ «Արմավիրի մտավոր թերզարգացում ունեցող երեխաների թիվ 1 հատուկ (օժանդակ) դպրոց» և «Վաղարշապատի մտավոր թերզարգացում ունեցող երեխաների թիվ 2 հատուկ (օժանդակ) դպրոց» ՊՈԱԿ-ներին որպես դրամաշնորհ՝ յուրաքանչյուրին 31.94 մլն դրամ և 2.63 մլն դրամ՝ ատեստավորման միջոցով որակավորում ստացած ուսուցիչներին հավելավճարների տրամադրման համար:

2018թ. Հայաստանի մանուկներ հիմնադրամի (COAF) կողմից մարզի 8 շահառու համայնքներում կիրականացվեն կրթական ծրագրեր՝ 40 մլն դրամ արժեքով:

2018թ. կրթության ոլորտի բյուջեն կազմում է 7,130.2 մլն.դրամ:

6.2. Մշակույթ, սպորտ և երիտասարդության հարցեր

Մշակույթ. 2018 թվականին ևս մարզպետարանի գործունեությունը կնպատակաուղղվի մարզում պետական մշակութային քաղաքականության իրականացմանը, մարզի մշակութային դերի բարձրացմանը, մշակութային ու հոգևոր ժառանգության պահպանմանը, ազգային արժեքների ու ավանդույթների վերականգմանն ու տարածմանը, պետական, ազգային ու այլ տոների, զանգվածային միջոցառումների կազմակերպմանը, թանգարանների, գրադարանների, մշակութային այլ օջախների նպատակային գործունեության ապահովմանը, կադրային քաղաքականության և մշակութային կրթության զարգացմանն ու առաջընթացին, հայ ընտանիքի բարոյական նորմերի

[1] Գումարը ներառված է քաղաքաշինության ոլորտի բյուջեում:

պահպանմանը, մատաղ սերնդի հայեցի դաստիարակությանը, երիտասարդության շրջանում տարվող աշխատանքների աջակցմանն ու ակտիվացմանը:

2018թ. մարզում նախատեսվում է իրականացնել 2 խոշոր՝ Հայաստանի Հանրապետության և մայիսյան հերոսամարտերի 100-ամյակին և ՀՀ անկախության օրվան նվիրված միջոցառումներ, որոնց համար 2018թ. պետական բյուջեով ՀՀ Արմավիրի մարզպետարանին հատկացվել է շուրջ 2.4մլն դրամ, ինչպես նաև կկազմակերպվեն այլ միջոցառումներ, հոբելյաններ, տարելիցներ, փառատոններ, ցուցահանդեսներ, տոնախմբություններ, գիտաժողովներ, համերգային և թատերական ծրագրեր:

2018թ. ՀՀ մշակույթի նախարարության կողմից մարզում կիրականացվեն մի շարք մշակութային ծրագրեր, մասնավորապես՝

1) «Երաժշտական ու արվեստի դպրոցներում ազգային, լարային, փողային նվագարանների գծով ուսուցում» ծրագրի իրականացում,
2) «Թանգարանային գիշեր» ակցիայի շրջանակներում թանգարանների անվճար այցելություն բոլոր այցելուների համար «Թանգարանային գիշեր» ակցիա,
3) «Մշակութային կանգառ» ծրագրի շրջանակում թատերահամերգային ծրագրերի, ցուցահանդեսների, կինոցուցադրությունների կազմակերպում (ներդումային ծրագիր 100000 ԱՄՆ դոլար),
4) «Զվարթնոց» պատմամշակութային արգելոց-թանգարանի ենթակառուցվածքների արդիականացման ծրագիր,
5) «Գեղարվեստական կրթության միջազգային շաբաթ» ծրագրի իրականացում,
6) «Ռոլան» մանկապատանեկան ֆիլմերի միջազգային փառատոնի շրջանակում ֆիլմերի ցուցադրություններ,
7) «Երաժշտական և արվեստի դպրոցների համար երաժշտական գործիքների ձեռքբերում,
8) «Ուսումնամեթոդական և գործնական օգնություն» ծրագրի իրականացում երաժշտական և արվեստի դպրոցների մանկավարժների համար,
9) «Ազգային մշակույթի պահպանումը, տարածումը, զարգացումն ու հանրահռչակումը Հայաստանի Հանրապետության մարզերում» ծրագրի իրականացում՝ Հացիկ համայնքում:

2018թ. պետական բյուջեով հատկացվել է 59.7 մլն դրամ[2] Շենիկ համայնքի և Բամբակաշատ համայնքի մշակույթի տների վերանորոգման, 44.3 մլն դրամը՝ երաժշտական և արվեստի դպրոցներում ազգային, փողային և լարային նվագարանների գծով ուսուցման և 44.3 մլն դրամ՝ «Արմավիրի մարզային գրադարան» ՊՈԱԿ-ին սուբսիդիայի տրամադրման նպատակով:

2018թ. նախատեսվում է համայնքային բյուջեի միջոցներով իրականացնել մշակութային ծրագրեր՝ 50.0մլն դրամ արժողությամբ:

2018թ. մշակույթի ոլորտի բյուջեն կազմում է շուրջ 134.7 մլն.դրամ:

Սպորտ և երիտասարդության հարցեր. ՀՀ Արմավիրի մարզը հանրապետության մարզական նվաճումներով աչքի ընկնող տարածաշրջաններից է: Մարզի մարզիկները պարբերաբար մասնակցում են տարբեր մարզաձևերից մեծահասակների, երիտասարդների և պատանիների աշխարհի, Եվրոպայի և միջազգային այլ առաջնություններին՝ մարզում հենակետային համարվող չորս մարզաձևերից՝ ըմբշամարտ, ծանրամարտ, բռնցքամարտ, շախմատ, և ունեն նշանակալի հաջողություններ ու ձեռքբերումներ՝ մեդալներ օլիմպիական խաղերում, աշխարհի, Եվրոպայի և միջազգային առաջնություններում:

[2] Գումարը ներառված է քաղաքաշինության ոլորտի բյուջեում:

Մարզում պետական երիտասարդական քաղաքականությունն իրականացվում է պետական կառավարման մարմինների, ՏԻՄ-երի, բարձրագույն և միջին մասնագիտական կրթական հաստատությունների, երիտասարդության հարցերով զբաղվող ՀԿ-ների և այլ մարմինների կողմից:

Ոլորտի թույլ կողմերից է Արմավիր և Մեծամոր քաղաքներում, ինչպես նաև գյուղական բնակավայրերում մարզամշակութային և ժամանցի վայրերի բացակայությունը:

2018թ. ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության կողմից մասսայական սպորտի ոլորտում մարզում կիրականացվեն մի շարք ծրագրեր, մասնավորապես՝

1) Պետական մարմինների աշխատակիցների միջև հրաձգության հանրապետական մրցույթին մասնակցություն,
2) Հանրակրթական դպրոցների 1-ից 3-րդ դասարանների միջև «Սպորտլանդիա» մարզական միջոցառման անցկացում,
3) Հանրակրթական դպրոցների 4-7-րդ դասարանների միջև «Սպորտլանդիա» մարզական միջոցառման անցկացում,
4) ՀՀ Նախագահի մրցանակի համար «Երեխաների խնամքի և պաշտպանության լավագույն մարզական հաստատություն» մրցույթի անցկացում,
5) ՀՀ Նախագահի մրցանակի համար «Լավագույն մարզական նախադպրոցական հաստատություն» մրցույթի անցկացում,
6) ՀՀ Նախագահի մրցանակի համար «Լավագույն մարզական ընտանիք» մրցույթի անցկացում,
7) ՀՀ Նախագահի մրցանակի համար «Հաշմանդամություն ունեցող լավագույն մարզիկ» մրցույթի անցկացում,
8) Նախազորակոչային և զորակոչային տարիքի երիտասարդության հանրապետական ռազմամարզական խաղերի անցկացում,
9) Հանրապետական մարզական փառատոնի անցկացում,
10) Հանրապետական ուսանողական խաղերին մասնակցություն,
11) Հանրակրթական դպրոցների 8-12-րդ դասարանների սպարտակիադայի անցկացում,
12) ՀՀ գյուղական մարզական խաղերի անցկացում,
13) Տարեցների հանրապետական խաղերի անցկացում,
14) ՀՀ Նախագահի մրցանակի համար «Լավագույն մարզական բակ», «Լավագույն մարզական քաղաք», «Լավագույն մարզական գյուղ» հանրապետական ստուգատեսներ:

2018թ. պետական բյուջեով հատկացվել է 134.8մլն դրամ[3] Էջմիածին քաղաքի նոր մարզադպրոցի կառուցման նպատակով:

2018թ. կշարունակվեն Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիայի կողմից իրականացվող Էջմիածնում ֆուտբոլի մանկապատանեկան մարզադպրոցի կառուցման և կահավորման, ինչպես նաև Արմավիր քաղաքի «Հոբելյանական» մարզադաշտի վերակառուցման աշխատանքները:

2018թ. մշակույթի, սպորտի և երիտասարդության հարցերի ոլորտների բյուջեն կազմում է 134.7մլն.դրամ:

6.3. Առողջապահություն

Բուժծառայությունների որակի և մատչելիության բարձրացումը մարզում սահմանվել է որպես ոլորտային գերակա նպատակ: Այս նպատակին է միտված առողջության առաջնային օղակի պահպանման և շտապ բուժօգնության հաստատությունների նյութատեխնիկական բազայի բարելավման, կադրերի վերապատրաստման, տուբերկուլյոզի, մալարիայի, ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի և

[3] Գումարը ներառված է քաղաքաշինության ոլորտի բյուջեում:

վարակիչ այլ հիվանդությունների կանխարգելման ուղղությունները: Առողջապահության համակարգի զարգացման միջոցառումները մշակելիս անհրաժեշտ է ուշադրություն դարձնել մարզային յուրահատկություններին:

Ոլորտի թույլ կողմերից է որոշ գյուղական ամբուլատորիաների ոչ բավարար պայմանները:

2018թ. համար պլանավորվել է առողջապահական կազմակերպությունների տարեկան բյուջեում վճարովի ծառայությունների տեսակարար կշռի 20%-ով աճ՝ 2017 թվականի համեմատ:

2018թ. վճարովի ծառայությունների աճ ապահովելու համար անհրաժեշտ է իրականացնել հետևյալ գործառույթները.

1) ***Սփվերային շրջանառության բացառում***
2) ***Բուժման բավարար պայմանների ապահովման նպատակով կենտրոնի սրացիոնար բաժանմունքների ընթացիկ և կոսմետիկ վերանորոգում***
3) ***Բարոյապես մաշված բժշկական սարքավորումների և կահույքի փոխարինում նորով***
4) ***Նոր տեխնոլոգիաների և սարքավորումների ներդրում (հատկապես ռենտգեն սարքավորում)***
5) ***Կադրային համալրում՝ վիրաբույժ, մանկաբույժ, անեսթեզյոլոգ***
6) ***Մատուցվող ծառայությունների գների վերանայում***
7) ***Պետական պատվերի ձևավորման եղանակի վերանայում՝ այն համապատասխան գործակցով կապելով վճարովի ծառայությունների հետ:***

2018թ. ՀՀ պետական բյուջեի միջոցներով նախատեսվում է հիմնանորոգել Արմավիրի բժշկական կենտրոնի ինֆեկցիոն բաժանմունքը՝ 50 մլն դրամ[4] արժեքով:

2018թ. Հայաստանի մանուկներ հիմնադրամի (COAF) կողմից մարզի 13 շահառու համայնքներում կիրականացվեն առողջապահական ծրագրեր՝ 20 մլն դրամ արժեքով:

2018թ. գլոբալ բյուջեով Արմավիրի մարզի առողջապահական հաստատություններին հատկացվել է 2,822.6 մլն դրամ:

2018թ. առողջապահության ոլորտի բյուջեն կազմում է 2,842.6 մլն դրամ:

6.4. Սոցիալական պաշտպանություն

Սոցիալական պաշտպանության ոլորտում սոցիալական ծառայութունների մատչելիության և որակի բարձրացումը համարվում է զարգացման հիմնական նպատակ:

2018թ. նախատեսվում է Էջմիածնում սկսել և ավարտել ինտեգրված սոցիալական աշխատանքի կազմակերպման գործընթացը, Բաղրամյանում և Արմավիրում շարունակել ինտեգրված սոցիալական ծառայությունների մատուցումը մեկ պատուհան սկզբունքով:

2018թ. ևս կշարունակվի զոհված, մահացած զինծառայողների ընտանիքի անդամների և զինծառայության հետ կապված հաշմանդամություն ունեցող անձանց բնակարանային ապահովության հիմնահարցերի լուծման ՀՀ կառավարության ծրագիրը:

2018թ. նախատեսվում է շարունակել խոցելի սոցիալական խմբերի հետ տարվող աշխատանքը:

2018թ. մարզում իրականացվող զարգացման ծրագրերում և ՓՄՁ-ի հետ կազմակերպվող ծրագրերում հնարավորինս շատ ներառել մարզի զբաղվածության տարածքային գործակալություններում հաշվառված և աշխատանք փնտրող անձանց:

2018թ. մարզում զբաղվածության կարգավորման ոլորտում նախատեսվում է իրականացնել 107.6 մլն. դրամ ընդհանուր արժողությամբ ծրագրեր:

[4] Գումարը ներառված է քաղաքաշինության ոլորտի բյուջեում:

2018թ. մարզում կենսամակարդակի բարձրացմանն ուղղված նպաստների ծրագրով նախատեսվում է իրականացնել 2,339.2 մլն. դրամ ընդհանուր արժողությամբ:

2018թ. Հայաստանի մանուկներ հիմնադրամի (COAF) կողմից մարզի 6 շահառու համայնքներում կիրականացվեն երեխայի և ընտանիքի աջակցության ծրագրեր՝ 30 մլն դրամ արժեքով:

2018թ. սոցիալական պաշտպանության ոլորտի բյուջեն կազմում է 2,476.8 մլն դրամ:

VII. ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ

7.1. Տրանսպորտ և ճանապարհաշինություն

Արմավիրի մարզը տարածքի հաշվով ամենախիտ ճանապարհային ցանց ունեցող մարզն է, որի ճանապարհային խտության բարձր աստիճանը կապված է միջպետական և տեղական ճանապարհների բարձր խտությամբ:

ՀՀ Արմավիրի մարզն ունի զարգացած տրանսպորտային ցանց, մարզի բնակչության 99%-ը ապահովված է մշտական երթուղային տրանսպորտային կապով: Արմավիրի մարզի հիմնական երթուղիները Բաղրամյանը, Արմավիրը և Վաղարշապատը միմյանց և Երևանին կապող երթուղիներն են: Մարզի համայնքներից մարզկենտրոն և տարածքային կենտրոններ գործում են 11 ավտոբուսային երթուղիներ և 11 միկրոավտոբուսային երթուղիներ: Մարզի համայնքներից դեպի մայրաքաղաք գործում է 4 ավտոբուսային և 10 միկրոավտոբուսային, իսկ դեպի այլ մարզեր՝ 3 ավտոբուսային և 4 միկրոավտոբուսային միջմարզային կանոնավոր երթուղիներ:

Բեռնաուղևորափոխադրումները մարզում հիմնականում իրականացվում են ավտոմոբիլային տրանսպորտով:

Ոլորտի թույլ կողմերն են՝ տրանսպորտային միջոցների մաշվածությունը, ճանապարհային ենթակառուցվածքների մաշվածության բարձր աստիճանը, հատուկ կարիքներով և սահմանափակ ֆիզիկական հնարավորություններով մարդկանց համար նախատեսված ծառայությունների բացակայությունը:

Ճանապարհաշինության ոլորտում իրականացվող քաղաքականությունն ուղղված է առկա ճանապարհային ցանցի հիմնանորոգմանը, վերականգմանն ու պահպանմանը: Ոլորտում դեռևս շարունակում է առաջնային լինել ճանապարհների հիմնանորոգման հարցը, միջպետական, հանրապետական, մարզային և միջհամայնքային ճանապարհների անմխիթար վիճակը՝ մարզային (տեղական) նշանակության ճանապարհների զգալի մասը ֆինանսական միջոցների բացակայության պատճառով տասնյակ տարիներ չեն նորոգվել, որի արդյունքում քանդվել են և դարձել տրանսպորտային միջոցների երթևեկության համար դժվարանցանելի: Նորոգման կարիք ունեն նաև կամուրջները, ուստի կամուրջների պահպանման համար անհրաժեշտ է նախատեսել ֆինանսական միջոցներ:

2018թ. ՀՀ պետական բյուջեով հատկացվել է 54.6 մլն դրամ մարզային նշանակության ավտոճանապարհների ձմեռային պահպանման, ընթացիկ պահպանման և շահագործման համար:

2018թ. Համաշխարհային բանկի ֆինանսավորմամբ նախատեսվում է հիմնանորոգել S-3-51 «Մ-5-Սարդարապատ-Նոր Արմավիր» 6.6կմ ավտոճանապարհը՝ 742 մլն դրամ և S-3-9 «Լուկաշին -Հ-17» 3.2կմ ավտոճանապարհը՝ 289.0 մլն դրամ արժողությամբ:

2018թ. մարզում նախատեսվում է իրականացնել պիլոտային ծրագիր ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտի ոլորտում:

2018թ. նախատեսվում է այլ աղբյուրներով իրականացնել ոլորտային ծրագրեր՝ 50.0 մլն դրամ արժողությամբ:

2018թ. տրանսպորտի և ճանապարհաշինության ոլորտի բյուջեն կազմում է շուրջ 1,135.6 մլն դրամ, որից 1,031.0 դրամը՝ կապիտալ ծրագրեր:

7.2. Խմելու ջրամատակարարում և ջրահեռացում

Մարզի բնակչությանը կայուն, հասանելի, մատչելի և որակյալ խմելու ջրամատակարարման բարելավումը ոլորտի զարգացման նպատակներից է: Համայնքների շուրջ 52%-ում առկա է շուրջօրյա ջրամատակարարում:

Ոլորտի թույլ կողմն է՝ մարզում ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի մաշվածության խնդիրը, իսկ որպես սպառնալիք՝ ջրամատակարարման համակարգի կախվածությունը էլեկտրաէներգիայից:

2018թ. մարզում Գերմանիայի զարգացման վարկերի բանկի ֆինանսավորմամբ, «Ջրային տնտեսության ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՀ-ի կողմից «Համայնքային ենթակառուցվածքի ծրագիր (ՀԵՑ) II Փուլ3» ծրագրով կիրականացվեն Արմավիր քաղաքի և 1 գյուղի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի բարելավման, Մեծամորի կոյուղու մաքրման կայանի կառուցման աշխատանքները՝ 613.0 մլն դրամ արժողությամբ:

2018թ. դոնոր կազմակերպության՝ «Վերջին օրերի Սրբերի բարեգործական կորպորացիայի» բարեգործական ծրագրով՝ կորպորացիայի հայաստանյան ներկայացուցչյան կողմից մարզի Երվանդաշատ համայնքում կիրականացվեն 3.4կմ երկարությամբ խմելու ջրի պոլիէթիլենային խողովակների և 3 ցայտաղբյուրների տեղադրման աշխատանքները՝ շուրջ 8.1 մլն դրամ արժողությամբ:

2018թ. նախատեսվում է համայնքային բյուջեի միջոցներով իրականացնել ոլորտային ծրագրեր՝ 170.0 մլն դրամ արժողությամբ:

2018թ. ջրամատակարարման և ջրահեռացման ոլորտի բյուջեն կազմում է շուրջ 791.1 մլն դրամ՝ կապիտալ ծրագրեր:

7.3. Գազաֆիկացում

ՀՀ Արմավիրի մարզը հանրապետությունում ամենագազաֆիկացված մարզերից է: Մարզի 97 համայնքներից 87-ը գազաֆիկացված են, մնացել է լուծելու 10 համայնքների (Բերքաշատ, Արաքս(էջմ.), Մեծամոր, Հայկաշեն, Լեռնամերձ, Երվանդաշատ, Բագարան, Արգինա, Արտամետ, Կողբավան) խնդիրը, որտեղ բնակվում է մարզի բնակչության 3.2%-ը:

2018թ. «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի կողմից մարզում նախատեսվում է իրականացնել 51.89 մլն դրամի աշխատանքներ՝ բնական գազի կենցաղային հաշվիչների, պաշտպանիչ արկղերի, ազդանշանային սարքերի և ինքնաշխատ վթարային անջատիչ կափույրների ձեռքբերման և տեղադման համար:

2018թ. նախատեսվում է համայնքային բյուջեի միջոցներով իրականացնել շուրջ 70.0 մլն դրամի ոլորտային ծրագրեր:

Ակնկալվում է նաև, որ 2018թ. մարզի չգազաֆիկացված որոշ համայնքներում ևս Լեռնամերձ համայնքի օրինակով կտեղադրվեն արևային կայաններ:

2018թ. գազաֆիկացման ոլորտի բյուջեն կազմում է 121.89 մլն դրամ՝ կապիտալ ծրագրեր:

7.4. Էներգետիկա

Էներգետիկայի ոլորտի զարգացման նպատակներից է շենք-շինությունների, փողոցային լուսավորության և տարբեր նշանակության օբյեկտներում էներգախնայողության և էներգաարդյունավետության մակարդակի բարձրացումը:

2018թ. ընթացքում Հայաստանի վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության հիմնադրամի կողմից նախատեսվում է ՀՀ տարածքում իրականացվող ծրագրերի շրջանակներում մարզում իրականացնել «Էներգախնայողություն հանրային օբյեկտներում», «Չգազաֆիկացված համայնքներում էներգաարդյունավետ վարկային» և «Համայնքային էներգախնայողության վարկային» ծրագրերը, որոնք կֆինանսավորվեն հիմնադրամի շրջանառու ֆոնդից:

2018թ. մարզում կշարունակվեն ՌԴ աջակցությամբ, «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի կողմից իրականացվող ՀԱԷԿ-ի N2 էներգաբլոկի շահագործման նախագծային ժամկետի երկարացման վարկային և դրամաշնորհային ծրագրերը՝ 22.0 մլրդ դրամ գումարով: Ծրագրի շրջանակներում նոր աշխատատեղերի ստեղծում չի նախատեսվում:

2018թ. «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի կողմից մարզում նախատեսվում է իրականացնել շուրջ 3,319.6 մլն դրամի աշխատանքներ՝ էլեկտրական էներգիայի հաշվառման և հսկման ավտոմատացված համակարգերի ներդրման, ինչպես նաև ոլորտային 16 ծրագրերի իրականացման համար:

2018թ. նախատեսվում է համայնքային բյուջեի միջոցներով իրականացնել շուրջ 70.0 մլն դրամի ոլորտային ծրագրեր (փողոցային լուսավորության անցկացում), ինչպես նաև այլ աղբյուրներով էներգախնայող համակարգերի ներդրման ծրագրեր՝ 100 մլն դրամ արժողությամբ:

2018թ. էներգետիկայի ոլորտի բյուջեն կազմում է 25,489.6 մլն դրամ՝ կապիտալ ծրագրեր:

VIII.ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ

Մարզի քաղաքաշինության ոլորտի հիմնախնդիրները կապված են բնակավայրերի քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման, հանրակրթական դպրոցների, առողջապահական, մշակութային, նախադպրոցական, մարզական օբյեկտների, բազմաբնակարան և վարչական շենքերի հիմնանորոգման, բնակարանաշինության, բնակավայրերի բարեկարգման, բազմաբնակարան շենքերի կառավարման գործին պետական աջակցության, ինչպես նաև քաղաքաշինական այլ խնդիրների հետ:

Բազմաբնակարան բնակելի շենքերի տանիքների հիմնանորոգումը, համայնքների գլխավոր հատակագծերի, շինարարական օբյեկտների նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմումը քաղաքաշինության ոլորտի զարգացման նպատակներն են:

2018թ. ՀՀ պետական բյուջեի միջոցներով մարզի կրթական, մշակութային, մարզական և առողջապահական օբյեկտների հիմնանորոգումների համար նախատեսվում է իրականացնել 571.6 մլն դրամի ծրագրեր, այլ աղբյուրներով պլանավորվել է 200.0 մլն դրամ՝ շենքերի տանիքների

վերանորոգման, Էջմիածնում մարզադպրոցի կառուցման, «Հոբելյանական» մարզադաշտի վերակառուցման շարունակական ծրագրերի իրականացման համար:

2018թ. քաղաքաշինության ոլորտի բյուջեն կազմում է 771.6 մլն դրամ՝ կապիտալ ծրագրեր:

IX. ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ, ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՈՒՄ, ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ, ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻՑ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԵՎ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

9.1. Տարածքային կառավարում

Մարզի երրորդ ռազմավարական նպատակն է՝ մարզային զարգացման ռազմավարության իրականացման ընթացքում մարզային և տեղական դերակատարների ակտիվության բարձրացումը և մարդկային կապիտալի կառավարման հմտությունների բարելավումը:

Մարզպետարանի և մարզի համայնքապետարանների աշխատակազմերի պարտադիր վերապատրաստումները դարձել են կարողությունների զարգացման շարունակական գործընթացներ: 2018թ. համար նախատեսվում է մարզային և տեղական մասնագետների, մարզային ռազմավարության իրականացման 240 սուբյեկտների շարունակական մասնագիտական վերապատրաստումների իրականացում՝ 40 քաղաքացիական և 200 համայնքային ծառայողներ:

2018թ. տարածքային կառավարման ոլորտի առաջնահերթություններն են՝

-Տարածքային կառավարման նոր օրենսդրության մշակմանը ակտիվ մասնակցությունը,

-Մարզային և տեղական դերակատարների կարողությունների հզորացման նպատակով վերապատրաստումների կազմակերպումը,

- Հանրապետական միջոցառումներին մարզի ներկայացուցիչների մասնակցության ապահովումը.

-Մարզպետարանի աջակցությամբ կամ ուղղակի գործողություններով մարզում կատարված ներդրումների ծավալի ավելացումը,

-***Մարզում չօգտագործվող պետական և համայնքային գույքի հաշվառումը, ըստ պիտանելիության աստիճանի դասակարգումը և իրականացվելիք ծրագրերի համար որպես արտադրական և գրասենյակային տարածքներ օգտագործելու համար սեփականատերերի հետ քննարկումների կազմակերպումը:***

2018թ. պետական բյուջեով մարզպետարանի ապարատի պահպանման համար հատկացվել է 506.4 մլն դրամ և 3.93 մլն դրամ՝ այլընտրանքային ծառայության ապահովման համար:

9.2. Տեղական ինքնակառավարում

2018թ. տեղական ինքնակառավարման ոլորտի առաջնահերթություններն են.

-Համայնքների խոշորացման գործընթացի կազմակերպումը,

-Նոր ձևավորվող համայնքների աշխատակազմերի կարողությունների հզորացումը,

-Նոր ձևավորվող համայնքների զարգացման ծրագրերի մշակումը,

-Մարզի 5000-ից ավել բնակչություն ունեցող համայնքների տնտեսական զարգացման ծրագրերի մշակումը,

-Պետական նպատակային հատկացումներ՝ սուբվենցիաներ ստանալու նպատակով հայտերի մշակումը և սահմանված կարգով ներկայացումը:

2018թ. կշարունակվի համայնքների տեղեկատվական բազաների շահագործման ծրագիրը, ինչպես նաև գյուղատնտեսության, քաղաքաշինության ոլորտների համապարփակ տվյալների հաշվառման, թերությունների վերացման և համայնքներում հաշվառման նոր համակարգերի ներդրման աշխատանքները:

2018թ. պլանավորվել է մարզի համայնքային բյուջեների սեփական եկամուտների տեսակարար կշիռը ընդհանուր եկամուտների մեջ՝ 41.2% (նախորդ տարվա 36.8%-ի համեմատ), աճը կկազմի 4.4%:

2018 թվականի հունվարի 1-ի դրությամբ 2017 թվականի համեմատությամբ համայնքների սեփական եկամուտները մեկ շնչի հաշվով 9889 դրամը նախատեսվել է ավելացնել 581 դրամով, որը կազմել է 10470 դրամ: Աշխատանքներ են տարվում համայնքների հետ համայնքների սեփական եկամուտները մեկ շնչի հաշվով ավելացնել ևս 1000 դրամով, որը կկազմի 11470 դրամ:

2018թ. պլանավորվել է մեկ շնչին ընկնող համայնքների սեփական եկամուտների աճ 16%-ով 2017 թվականի համեմատ և մեկ շնչին ընկնող համայնքների ընդհանուր եկամուտների աճ՝ 5.6%-ով:

2018թ. համայնքների տրամադրվող դոտացիաների չափը կազմում է 4,380.7 մլն դրամ:

Տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման ոլորտների ընդհանուր բյուջեն կազմում է 4,891.1 մլն դրամ:

9.3. Քաղաքացիական հասարակություն

2018թ. նախատեսվում է շարունակել համագործակցության քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների՝ հասարակական, միջազգային կազմակերպությունների, զանգվածային լրատվամիջոցների, համայնքային միավորումների հետ:

2018 թվականին նույնպես տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման համակարգերի գործունեության կարևոր ուղղություններից մեկը կլինի հասարակության լայն խավերի ընդգրկումը, մասնակցությունը մարզային և համայնքային զարգացման գործընթացներին: Համայնքների բնակիչների շրջանում իրավունքների և պարտականությունների մասին իրազեկության բարձրացմանն ուղղված միջոցառումների շարունակականության ապահովումը:

9.4. Արտակարգ իրավիճակներից բնակչության և տարածքների պաշտպանություն

Մարզում տեխնածին արտակարգ իրավիճակների ծագման հիմնական սպառնալիք են համարվում ՀԱԷԿ-ի վթարները, վտանգավոր նյութեր տեղափոխող ավտո և երկաթուղային տրանսպորտային միջոցների վթարները, քիմիական վտանգավոր օբյեկտներում առաջացած վթարները, հրդեհապայթյունավտանգ օբյեկտների վթարները, ավտովթարները, կենցաղային հրդեհները:

2018 թվականին ևս բնական և տեխնածին աղետների ժամանակ բնակչության պաշտպանվածության խնդիրները մարզպետարանի ուշադրության կենտրոնում կգտնվեն: Գարնանային հնարավոր հեղեղումները կանխարգելելու նպատակով մարզի տարածքում պետք է կատարվեն հետևյալ միջոցառումները. հեղեղավտանգ տեղամասերի հետախուզում, վտանգավոր տեղամասերի հայտնաբերում, կանխարգելիչ աշխատանքների գնահատում, գետի հունի մաքրում և ափերի ամրացում, սելավատարի հունի մաքրում և ափերի ամրացում: Կարկուտի հետևանքներից

խուսափելու համար անհրաժեշտ է մարզի մնացած համայնքներում շարունակել հակակարկտային կայանների և ցանցերի տեղադրման աշխատանքները:

Շենքերի և շինությունների փլուզումից, հնարավոր հետևանքներից խուսափելու համար իրականացնել դրանց ամրացման աշխատանքներ:

Ճանապարհատրանսպորտային պատահարների կանխարգելման նպատակով անհրաժեշտ է իրականացնել վթարային կամուրջների ամրացման և վերականգնման աշխատանքներ: Ձմեռային սեզոնի համար ավազի և աղի պաշարների կուտակում, համապատասխան տեխնիկայի նախապատրաստում:

Ռիսկերի նվազեցման գործընթացում կարևորվում են սեյսմիկ ռիսկի նվազեցման միջոցառումները, աղետների վերաբերյալ տեղեկատվական, վերլուծական, ինչպես նաև ազդարարման, իրազեկման աշխատանքների կազմակերպման և իրագործման դերը:

X. ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

Մարզի 2018 թվականի գործունեության ծրագիրը մշտադիտարկման կենթարկվի ՀՀ Արմավիրի մարզպետարանի կողմից՝ առաջընթացի և մարզի ռազմավարական նպատակներին հասնելու առումով: Կատարողական ցուցիչները տարեկան կհաղորդվեն և կգնահատվեն ՀՀ Արմավիրի մարզպետարանի կողմից, արդյունքները կներկայացվեն ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն:

XI. ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ 2018Թ. ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄԸ

2018 թվականին ՀՀ Արմավիրի մարզի բոլոր ոլորտների ծրագրերի իրականացման համար պահանջվող ֆինանսավորումը կազմում է 81,849,962.6 հազ. դրամ, որից՝

- **պետական բյուջե** **44,677,198.5 հազ.դրամ**
  -սեփական միջոցներ *19,441,798.5 հազ.դրամ*
  -վարկային միջոցներ *25,235,400.0 հազ. դրամ*
- **միջազգային և դոնոր կազմակերպություններ** **98,074.1 հազ. դրամ**
- **համայնքային բյուջե** **630,000.0 հազ.դրամ**
- **մասնավոր ներդրողներ** **35,924,690.0 հազ. դրամ**
- **այլ աղբյուրներ** **520,000.0 հազ.դրամ**:

2017 թվականին մարզում կատարվել են 23.0 մլրդ դրամի ներդրումներ՝ 652 հիմնական և 2500 սեզոնային աշխատատեղերով: 2018 թվականին պլանավորվում է ստեղծել 1450 աշխատատեղեր:

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

Հավելված 1 - *ՀՀ Արմավիրի մարզի 2018 թվականի գործունեության ծրագրի ցրամաբանական հենք*

Հավելված 2 - *ՀՀ Արմավիրի մարզի 2018 թվականի գործունեության ծրագրով նախատեսված միջոցառումների ֆինանսավորումը՝ ըստ ոլորտների*

Հավելված 3 - *ՀՀ Արմավիրի մարզի 2018 թվականի գործունեության ծրագրով նախատեսված բոլոր ոլորտների ամփոփ ֆինանսավորումը*